

վերադասելի չե՞ն հիմակուան ազգային կրթութեան փոյթ ունեցող վարժապետներն՝ որ թէպէտ և անոնցմէ շատ պակաս են կատարելութեամբ, բայց շատ ալ աւելի օգուտ կ'ընեն զանազան ազգային դպրոցաց մէջ՝ իրենց ազգային հոգւովն :

Դուսանք որ իմացան բարեսէրք՝ թէ մեր միտքն օտարներէ խորշիլ չէ, հապա անոնց չթողուլ մեր զաւակաց մեր յցսերուն կրթութիւնն. իսկ անոնցմէ ուսմանց վարպետ առնուլ, կամ մեր տղաքն անոնց քով դրկել՝ կ'ընդունիք ալ կը յորդորենք ալ. միայն թէ այն ատեն ալ թէ որ ուսանողքն դեռ համը բակ են՝ կը փափագինք որ ազգային ձեռքի տակն ըլլան, և այս բանիս օրինակ կուտան այսօրս մեզինոր կրթուող ազգերն ալ, Յոյնք, ( Կ սմանեանք, Երգիպտացիք, և Եւրոպացւոց մէջ վերջի կրթուած ազգերն :

Հ . Դ . Մ

---

### Բարոյական առաջներ :

ԵՐԲՈՐ մէկը ուրիշներուն կարգ կանոն կը դնէ ու ինք իր վրայ անփոյթ է, դրսուանց աղատ ու ներսէն գերի է :

Ծակ որ երեելի ընկերութեան մը զլուխ ըլլաս, աս գիտցիր որ գլխաւոր մը երբոր կ'ուզէ վայելուչ կերպով իր պաշտօնն ընել, պէտք է ինքը օրինակ ըլլայ՝ աւելի գործքով քան թէ խօսքով :

Ծակ որ գրագէտ չես, գէթ գրագէտները սիրէ, թէ որ գիտուն չես, նայէ որ գիտուններուն պատիւը պահես :

Ծակ որ քաղցրաբարոյ ըլլաս, ու խօսակցութեան մէջ անուշ կերպ բանեցնես, քեզի հետ վարուիլը ամենուն փափաքելի կ'ըլլայ :

Ծակ որ արդարութեան ու հաւատարմութեան անուն հանես, ամէն տեղ վրադ վստահ՝ կ'ըլլան, և ինչ դժուարութիւն որ վրադ գալու ըլլայ՝ քու խօսքդ կը զօրէ :

Ծակ որ ընտանիքէդ անհանգստու-

թիւն մը ունենաս, նայէ որ լրութեամբ անցընես . իսկ թէ որ յանկարծ նշան մըն ալ տալու ըլլաս, զուարթութիւնդ ու համեստութիւնդ մի կորսնցըներ . վասն զի աս տեսակ դիպուածներուն մէջ ասկէց աղէկ ձամբայ չկայ, որով աս ալ կը ցուցընես՝ թէ քեզի անհամոյ եղած այսպիսի բաները և ոչ մտածելու արժանի կը սեպես :

Ծակ որ կիրքերուդ ետևէ ըլլաս, քու առջի թշնամիդ դուն կ'ըլլաս :

Վզգականներդ ու բարեկամներդ անուշ երեսով ընդունէ, ասանկ որ ըննես, գիտցիր որ ամեննեին ընդունիլը աւելի լաւ է :

Ինանկ մարդիկներու վստահ եղիր, որ իրենց արդեամբքը, հանձարովն ու արդարութեամբը երեելի եղած են :

Կայէ որ թէ ստացուածքիդ մէջ թէ կարասեացդ մէջ և թէ խօսակցութեանդ մէջ համեստութիւնդ փայլի միշտ :

Զարաբարոյ մարդը ան ատեն աւելի կը յայտնուի, երբոր զինքը ծածկել կ'ուզէ : Վսկէց խելք սորվէ ու կեղծուպատիր ձևացմունքներու շատ մի վստահիր . անոնք երբ ըլլայ վրայէդ կը վերնան, ու ինչ ըլլալդ յայտնի կ'ընես :

Հարստութիւնը շատ մարդկանց թը շուառութեանը պատճառ եղաւ . ոմանց փափաքով թէ երբ պիտի հարըստնան, ոմանց վախով ըլլայ թէ ունեցածնին կորսընցընեն, երկու կողմն ալ թշուառութիւն է : Բայց ասոնց ետևէն ըլլալը քեզմէ կախուած է :

Վարդո երեելի ընողը՝ ոչ ազնուատոհմութիւնն է ոչ հարստութիւն և ոչ ունեցած մեծամեծ պաշտօնները, հապա զանոնք լաւ կերպով գործածելը :

Ծակ որ թշնամիներդ շահիլ կ'ուզէս, իրենց ծառայելէն ու բարիք ընելէն ետ մի կենար . բայց թէ որ կիրքերդ կատարելուզէս, անոնց գերի կ'ըլլաս :

---